



Հ Ր Ա Մ Ա Ն

7 հոկտեմբերի 2019 թվականի № 559-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՈՆԿՐԵՏ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի № 878-Ն որոշման հավելվածի 7-րդ կետով՝ **հրամայում եմ**.

1. Հաստատել՝

1) սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի իրավաբանական վարչության փորձագետի կողմից կոնկրետ հանձնարարականների իրականացման աշխատանքային ծրագիրը՝ համաձայն № 1 հավելվածի:

2) սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Շիրակի մարզային կենտրոնի փորձագետի կողմից կոնկրետ հանձնարարականների իրականացման աշխատանքային ծրագիրը՝ համաձայն № 2 հավելվածի:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

 Недействительная подпись

X 

VERIFIED OCSP 07.10.2019 16:39:30 GMT+4

Подписано: HAYRAPETYAN NAREK 1805770268

Ն. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 7

Ք. Երևան



Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության
տեսչական մարմնի ղեկավարի
2019 թվականի հոկտեմբերի 7-ի N 559-Ա հրամանի

ԾՐԱԳԻՐ

ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԿՈՆԿՐԵՏ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի վերակազմավորման գործընթացով պայմանավորված Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի իրավաբանական վարչության կողմից իրականացվելու է գործող օրենսդրության ուսումնասիրություն և քաղաքականության և վերահսկողության գործառույթների տարանջատման տեսանկյունից առաջարկությունների ներկայացում, ուստի կոնկրետ հանձնարարականների իրականացման համար նպատակահարմար է ներգրավել փորձագետ:

Փորձագետն իրականացնում է սննդամթերքի և կերի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում քաղաքականություն մշակող մարմնի և Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող քաղաքականության և վերահսկողության գործառույթներ սահմանող օրենսդրության ուսումնասիրություն և քաղաքականության և վերահսկողության գործառույթների տարանջատման տեսանկյունից առաջարկությունների ներկայացում:

Փորձագետը սույն ծրագրով կատարման ենթակա աշխատանքներն իրականացնում է վեց ամիս ժամկետով:

Փորձագետի կողմից կատարված աշխատանքների արդյունքում առաջադրված խնդիրները պետք է ստանան ամբողջական լուծում:

Փորձագետը, սույն ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ երեք ամիսը մեկ անգամ՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 5-ը անմիջական ղեկավարին է ներկայացնում կատարված աշխատանքների վերաբերյալ ամփոփ հաշվետվություն:

Փորձագետի աշխատանքների գնահատման համար հիմք է հանդիսանում վերջինիս կողմից ներկայացված հաշվետվությունները:

Սույն ծրագրի իրականացման համար փորձագետը պետք է ունենա՝

1. իրավագիտության մասնագիտությամբ բարձրագույն կրթություն,
2. առնվազն մեկ օտար լեզվի իմացություն,
3. «Տեսչական մարմինների մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին», «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին», «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների և ոլորտային այլ իրավական ակտերի իմացություն:

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության
տեսչական մարմնի ղեկավարի
2019 թվականի հոկտեմբերի 7-ի N 559-Ա հրամանի

ԾՐԱԳԻՐ

ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԿՈՆԿՐԵՏ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Մարզային կենտրոնի մի շարք աշխատողների գործունեության արդյունքում խնդիրների առաջացման հանգամանքով պայմանավորված Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Շիրակի մարզային կենտրոնում (այսուհետ՝ Մարզային կենտրոն) անհրաժեշտ է իրականացնել կատարված գործառույթների ուսումնասիրություն, վերլուծություն և խնդիրների վերհանում, ուստի կոնկրետ հանձնարարականների իրականացման համար նպատակահարմար է ներգրավել փորձագետ:

Փորձագետն իրականացնում է Մարզային կենտրոնի կողմից սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում պետական վերահսկողության գործառույթների, վարչական վարույթների, կազմվող փաստաթղթերի ուսումնասիրություն, վերլուծություն, խնդիրների վերհանում, վերահսկողության շրջանակներում իրականացվող գործողությունների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, ոլորտային մասնագետների հետ համատեղ դիրքորոշումների ձևակերպում և մեկնաբանությունների տրամադրում, ինչպես նաև վերհանված խնդիրների լուծման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

Փորձագետը սույն ծրագրով կատարման ենթակա աշխատանքներն իրականացնում է վեց ամիս ժամկետով:

Փորձագետի կողմից կատարված աշխատանքների արդյունքում առաջադրված խնդիրները պետք է ստանան ամբողջական լուծում:

Փորձագետը, սույն ծրագրով հանձնարարված աշխատանքների վերաբերյալ երեք ամիսը մեկ անգամ՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 5-ը անմիջական ղեկավարին է ներկայացնում կատարված աշխատանքների վերաբերյալ ամփոփ հաշվետվություն: Փորձագետի աշխատանքների գնահատման համար հիմք է հանդիսանում վերջինիս կողմից ներկայացված հաշվետվությունները:

Սույն ծրագրի իրականացման համար փորձագետը պետք է ունենա՝

1. Իրավագիտության մասնագիտությամբ բարձրագույն կրթություն,
2. առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ,
3. համակարգչային բազային գիտելիքների իմացություն: